

կտուրներով եւ բամբուկի բարակ պատերով: Յաճի յարկում գետեղլած է լինում խանութը կամ արհեստանոցը, վերելում ապրում է տէրը: Ընդհանուր տպաւորութիւնը մօտաւորապէս նոյնն է, ինչ որ ասիական բազարը Կովկասում: Այստեղ էլ չկան արտաքին պատեր, այստեղ էլ ապրանքը դարսւած է դուրսը: Ամեն ինչ բաց է, ամեն ինչ մատչելի ցանկացողի աչքին: Հիմնական մեծ տարբերութիւնն այն է, որ այստեղ հետք անգամ չկայ ասիական համբաւաւոր անկարգութեան ու կեղտի:

Շուրջը ամեն բան փայլում է մաքրութիւնից: Շէնքերը այնպէս սեղմ ու անընդհատ կցւած են իրար, որ մարդ ակամայ սարսափում է, մտածելով, թէ ի՛նչ է լինելու քաղաքը, եթէ յանկարծ հրդեհ ընկնի: Ի՛նչ ճարակ կայ այստեղ բոցերին: Կարտոնի նման բարակ տները չոր յարդի պէս մի վայրկեանում կայրւեն: Բայց իսկապէս հրդեհը այնքան էլ մեծ ու յաճախ չի լինում այստեղ համեմատաբար: Ճապոնացին կրակի հետ չափագանց զգոյշ է:

Նա երբէք գիշերը չի թողնի նաւթի լամպը վառ, այլ միայն իւղի կանթեղը, որ հեշտ է յանգչում:

Բացի այդ, իր թանկագին իրերը նա միշտ պահում է տան կից մի փոքրիկ քարաշէն մասում:

Իսկ հրդեհի ժամանակ նրանք խմբովին օգնութեան են վազում այրւող տան ներսը. վերջն էլ օգնում են հրկիղեալին, ընդհանուր օժանդակութեամբ նրա համար մի նոր տուն գնելով:

Տները խիստ էժան են եւ ծախւում են պատրաստ. նրանց թեթեւութեան ու կազմի պարզութեան պատճառով հեշտ է եւ տեղափոխելը: